

Միհրան – ինձ մարդիկ, աւերակներ
պիտի գտնեն:

Վարսենիկ – Հայր մըջիւնի կը նմանի.
որքան իր բոյնն աւերեն՝ նորէն կը շինէ:

Վաղինակ – Կրնան աւարը տանիլ,
դիակները մերկացնել:

Արմենակ – Թող ուզածնին ընեն:

Վարդան – (Բեմին առջեւ) Սպանե՛ր եւ
զինուորներ: Մեր պատերազմը տակաւին
չէ վերջացած: Մենք յաղթեցինք Կովկա-
սի մէջ, բացինք ձորայ պահակը, Հոնե-
րը դաշնակից ըրինք: Արմաւիրը յաղթա-
կան մնաց, սակայն թշնամին դեռ մեր
երկրի սրտին մէջն է. տակաւին բերդեր
եւ դաւաճաններ իրենց ափին մէջն են:
Կը մնայ զերազոյն յաղթանակը, փրկել
մեր հայրենիքն ու կրօնքը՝ ահաւոր բռն-
նաւորի մը ձեռքէն: Մենք թէ ոչ՝
յաղթանակը միշտ մերն է, որովհետեւ
սուրբ եւ զերազոյն նպատակի մը համար
կը պատերազմինք: Դաւաճաններու տեղ՝

մեր կողքին ունինք սքանչելի ժողովուրդը
եւ հողեթօս վարդապետները, ունինք մեր
քաջարի բանակը եւ կիները: Մեր սուրբ
փայլակի պէս հատու պիտի ըլլայ շողա-
լու թշնամի պարանոցներու վրայ: Եր-
թանք դէպի նոր պատերազմ, երթանք
դէպի Ա. Ի. Ա. Ր. Ա. Յ. Ր.:

(Փողերը կը հնչեն եւ ամէնքը միասին
կ'երգեն «Արեւն ելաւ Զէյթունցիներ» ու
եղանակով):

Հայաստանի հերոս բանակ,
Պատերազմի սիրահար,
Դէպի կրօն եւ յաղթանակ,
Վարդաններու սուրին տակ:

Յառա՛ջ, յառա՛ջ երթանք մարտի,
Մահն անոյշ է մեզ համար.
Այսպէս կ'ուզէ մեր հայրենիք,
Մահն անոյշ է մեզ համար:

Վ Ե Ր Զ

Գրուած Հալէպ, 10 Մարտ 1951ին. վերամշակուած 27 Ապրիլ, 1961ին Վենետիկ

Հ Ե Ռ Ո Ւ Ի ...

Բոլորը ալ փրփրած մտքէս հեռացէք,
Հին խոկումներ, անցեալիս չափ դիւքական,
Հիմակ այլեւս Ձեր նետերով չարանենգ
Մի՛ մահացնէք շիթ առ շիթ՝ գէթ իմ ներկան:

Բոլորդ իսկոյն տենդոտ սրտէս ա՛լ թըռէք,
Ո՛վ պարիկներ երանութեան աշխարհին,
Յամբած քիմիս դուք նագանքով մը բեկբեկ
Համը կու տաք Ձեր հեշտութեան պըտուղին:

Թող առանձին վըշտի ովկեանըս չափեմ,
Ինչպէս լընակս ուրախութեան ժպտադէմ
Կը դիտէի օր մը առաջ... բայց ինչո՞ւ

Կու գաք սփոփել երջանկութիւնս վաղամահ
Գարնան թռիչքով. ա՛լ անօգուտ է հիմա.
Մէքըս գընաց անվերադարձ եւ հեռու...:

Աթէնք, 15/12/1961

Յ. Ա. ՃԵԼԱԼԵԱՆ

Զ Ի Ն Ո Ւ Ո Ր Ի Ն

Զինուո՛ր, գոնէ, հետըդ գայի
Լուռ պահ մը միայն գիշերային
Երբ փունըդ չի՛ գիտեր երագ,
Գիշեր մը միայն անծայրածիր
Խաւարասոյց Տանթէական դրժնխփին պէս,
Երբ տեսիլներ կ'իջնեն, ահա՛.
— Շէն եմ, գիւղակըդ կը գրուցէ.
= Ցից պարեթները սուներս են, կ'ըսես ցածկեկ.
— Ճոխ եմ, սեղանըդ կը կանչէ.
= Ճաշըս փամփուշտն եւ ծըծումբը կը համեմեն, կը մըմընջես.
— Փարթամ եմ, կոչ կ'ընէ պարտէզդ.
= Ամէն մէկ նիւզ կըրակն այրեց, կը փըսփըսաս:

Զինուո՛ր, գոնէ, հետըդ գայի
Լուռ պահ մը միայն արշալոյսի,
Երբ չի՛ գտներ ձայնդ արձագանգ,
Միայն արշալոյս մը միապաղաղ
Ի՛նչպէս սառոյց մը անսահման բեւեռային,
Երբ շշուկներ կու գան, ահա՛.
— Շէն եմ, գիւղակըդ կը գրուցէ.
= Աշման շըշուկը կը շաչէ, կ'ըսես ցածկեկ.
— Ճոխ եմ, սեղանըդ կը կանչէ.
= Այ ու քացալս վախկոտ խիղճիս վրայ կը խնդան, կը մըմընջես.
— Փարթամ եմ, կոչ կ'ընէ պարտէզդ.
= Եղին կ'անի, հոն ճանկերով նիւաղային, կը փըսփըսաս:

Զինուո՛ր, գոնէ, հետըդ գայի
Լուռ պահ մը միայն միջօրէի,
Երբ չունի սիրտըդ բաբախում,
Միայն միջօրէ մը ամայի
Սահարայի անվերջ ոսկի աւազին պէս,
Երբ տրոփիւններ կ'եռան, ահա՛.
— Շէն եմ, գիւղակըդ կը գրուցէ.
= Ի՛նչ պըսպըղուն է մարմարինոն... իմ «Հերոս»ի գերեզմանիս.
— Ճոխ եմ, սեղանըդ կը կանչէ.
= Գինի՛ եւ սո՛ւրն հոն կը խըմեն... որ ինձ մոռնան, մըսիթարուն.
— Փարթամ եմ, կոչ կ'ընէ պարտէզդ.
= Աղուո՛ր վարդեր որ կը ծըծեն հողը կեանքովս պարարտացած:

Դու կը հեւաս. իսկ ես քեզի, Գուրն անծանօթ, կ'աղաղակեմ
Օ՛, ողջակէզ գինուոր, գոնէ այդտեղ միայն հետըդ գայի...:

Աթէնք, 24/4/62

Յ. Ա. ՃԵԼԱԼԵԱՆ